է Մարիամ Աստվածածնի, իսկ ինքը՝ մի մոր Հիսուս Քրիստոսի: Սա վեպի թաքնված գրոտեսկն է: Նահապետն իր անձի պաշտամունք է ակնկալում, բայց ամեն ինչ այլ է՝ շատ հեռու պաշտամունքից: Թեեւ, այդքանով հանդերձ, հայրյուրամյա ժամանակի մեջ նրան տեսած ու մոռացած, նրան չտեսած, նրա մասին սոսկ լսած սերունդներն առասպելներ են հյուսում նրա անվան շուրջ՝ սուրբ մոմեր են վառում նրա համար, նրա «ամուսն են հիշատակում, որպեսզի ծննդկանները հաջող ազատվեն, եւ մահամերձի ճակատագիրը փոխվի» (էջ 255):

Վեպը բաժանված է վեց դրվագի: Աստված աշխարհն ստեղծեց վեց օրում, յոթերորդ օրը համազատացավ: Մարկեսի շատ գաղտնագրեր տաճուն են դեպի Աստվածաշունչ, այս մեկը եւս:

Մեծնող-հաճնող մի ուժ կա Նահապետի մեջ: Նրա մասին պատմում են շատերը, որոնց պատումը միախառնվում է հեղինակային պատմման, տարբեր ծայրերը դառնում են միասնական ծայր, որովհետեւ նույն ոճական ձեւի մեջ են: Իր մասին խոսում է նաեւ ինքը՝ Նահապետը, մոր արեւով երդվում է ու միջմատում խոսքին, ինքնաբերական դիտարկումներն են, մտաբերումներն ու դատողությունները:

Յուրաքանչյուր դրվագի մուտքը մահվան տեսարան է: Ժամանակի որոշակիությունն չկա: Սկիզբը. «Շաբաթվա վերջին գիշատիչ անգղերը պատշգամբներից խուճեցին նախագահական պալատ...» (էջ 7): Ո՛ր տարվա, դժ ամսվա, դժ շաբաթվա վերջին: Այս գիտակցված անորոշությունն ու անամուսնությունը հավերժական ժամանակի անվերջությունը ցույց տալու համար են:

Պալատի հաջորդական բակերն են, որոնցում բորոտներ են ապրել, որտեղ հարձերի բարձրներ են, իսկ ամբողջ պալատով մեկ իրենց բնական կենսագործունեությամբ շրջում են կովեր, հավեր ու հնդկահավեր են ամեն ինչ ապակաճում. «... միստերի դահլիճ հասանք, որտեղ կաշիները որդնած կովեր գտանք...» (էջ 9): Այստեղ էլ մի առանձնատեսակում «...ահա տեսանք նրան՝ առանց տարբերանշանների քաթան են համագցեստով. սոճնապաններով, ձախ կրունկին փայլող ոսկե խթանով, էլ ավելի ծեր, քան բոլոր մահկանացուները եւ ցամաքային ու ջրային բոլոր հնագույն կենդանիները, հատակին բերանքսիվայր փռված, աջ ձեռքը բարձի տեղ գլխի տակ ծալած, ինչպես եւ քնել էր ամեն Աստուծո գիշեր մեմակայաց բռնակալի իր չափազանց երկար կյանքի ընթացքում» (էջ 9–10):

Գեներալի մահվան ոչ այնքան ծիսական, որքան երկարող, ձգձգվող արարողությունն ամբողջ վեպի գծային հորձանքի տեղադրությունն է, որին նույն կերպ հաջորդում է կյանքի հանգամանքների, երբեմն անգամ մանրամասների մակընթացությունը: Գծային առաջանցիկ հորձանքի հետ նաեւ հի-

շողություններից խոսքի օղակող շղթա հյուսող եւ արագությամբ շունչը համազատացնող հորիզոնական գծերն են:

Պալատի առջեւ «մրափող վիթխարի քաղաք-կենդանին» է: Եթե անգամ Նահապետի դեմքն անգղերը բզկտած չլինեին, միեւնույն է՝ Նահապետին ոչ ոք չէր ճանաչի, որովհետեւ «ոչ մեկը երբեք չէր տեսել նրան, թեւ նրա դիմագծերը դրոշմված էին մանրադրամների, փոստային կնիքների վրա, առկա էր ամենուր, բայց դրանք կրկնօրինակների կրկնօրինակներ էին, որ գիսաստղի օրերին արդեն արժանահավատ չէին համարվում» (էջ 10): Ինչ-որ մեկը սոսկ պատմել է, որ տեսել է նրա թախծոտ աչքերը, գունատ շուրթերը, մտախիտ օրհնող ձեռքը, բայց իրականում «ոչ մի մահկանացու չէր տեսել նրան դեղին տենդի ժամանակներից ի վեր» (էջ 10):

Նախագահական այս պալատում վիթխարի մեռելի հոտ է, կտցահարված մարմինն ընկած է մնում մինչեւ վերջ, պատշգամբում կովեր են շրջում, որոնց ներկայությունը եւս մշտական է: Մեկը հարցնող լինի՝ այս կովերը, անգամ հավերն ու հնդկահավերը կառավարության շենքում ի՞նչ են անում եւ ի՞նչի խորհրդանշան են: Հնդկաստանում լինել, կիսականայինք, այնտեղ կովն անձեռնմխելի պաշտամունք է: Իսկ հնդկացիների երկրում... Ավելալացե՛նք, որ այս տարածքներում ապրում են նաեւ բորոտներ, կույրեր ու անկյանք: Քա՛ն որ նախագահականը նաեւ կառավարության տունն է, ուստի կովերը զուցե կառավարության անդամների խորհրդանշաններն լուռ էին, ինչպես անասուն, կային այնքանով, որքանով նրանց կարող էին փոխարինել կովերը... Գեներալի ավերված անշունչ մարմինն է, եւ անգամ այդ սպասված, բայց երկար սպասելուց մոռացված պահին մարդկանց հանդգնում հավատալ նրա մահվանը: Նահապետը մեռել էր քնի մեջ՝ իր բնական մահով, ճիշտ այնպես, ինչպես հմայական ջրերի մեջ կանխատեսել էին գուշակները: Վերջում մահը քիչ այլ եղանակ է, որովհետեւ այսպիսիների մահն էլ վերջնական չէ: Չուգահեռ մտաբերենք. Ստալինի մահվանը եւս չէին հավատում, կարծում էին՝ պահը կանցնի, ուղի կկանգնի:

Իկ կույր շրջմուկի էին տարել գեներալի մոտ, որը Ռուբեն Դարիոյի բանաստեղծությունն է արտասանել (Դարիոյի ամուսնը մի քանի անգամ հիշատակվում է), բայց կույր Նահապետին չի տեսել ոչ թե այն պարզ պատճառով, որ կույր է, այլ որ ընդհանրապես նրան ոչ ոք չի տեսել:

Նեխող, քայքայվող դիակի ներկայությամբ այսպես յուրաքանչյուր դրվագում հորդում են նրա կյանքի պատմությունները, հիշվում են նրա հրամանները: Օրինակ՝ այս մեկը. «Թող աշտարակի ժամացույցի ժամը տասներկուսին չխփի տասներկուսե՛ր, այլ երկուսի՛ն, որ կյանքն ավելի երկար թվա՛» (էջ 14): Այդպես, որովհետեւ ամեն ինչ Նահապետի կամոն էր:

Նահապետին դիմում են՝ իմ գեներալ, բայց այդ «իմ» ասողների մեջ ոչ միայն հավատարմի ծառայողներն են ու քննողները, այլեւ հակառակորդները, ծայրայթ թշնամիներ, որ նրա մահին են ուզում, ուստի անպակաս են նաեւ մահափորձերը: Կողքից ուրվագծվում են կերպարներ՝

Պատրիսիո Արագոնես, որի երեխաները «գեներալից ծնվածների մնամ օրապական էին ծնվում», որը դարձավ իշխանության կարեւորագույն անձը, գեներալ Ռոդրիգո դե Ազիլար՝ պաշտպանության նախարար, նախագահի թիկնազորի հրամանատար, ազգային անվտանգության ծառայության պետ:


Դերոսները կերպավորվում են իրենց, պահին հարմար իրավիճակներում: Ահա բոլոր գուժում է, որ Պատրիսիո Արագոնեսը թունավոր միզակով մահացու վիրավորվել է: Պահին համապատասխան ներկայացվում է այն պատկերը, թե ինչպես գեներալի հետ տարիներ առաջ վիճակ են գցել «կյանքի վրա», հետո դրմուն են խաղացել նույն պայմանով՝ ով պարտվի, մյուսից քիչ կպարի: Եվ այդ պահին հոգեվարքի մեջ ասում է. «Հիմա արդեն կարող եմ ասել, որ երբեք, երբեք Ձեզ չեմ սիրել, ինչպես Դուք եք երեակայել...» (էջ 29): Այսպես խորանում, ճյուղավորվում է հարաբերությունների պատմությունը՝ ի հայտ բերելով մի դաժան իրականություն՝ իշխանական սարդոստայաններում ոչ ոք ոչ չի սիրում, հանդուրժում են իրար՝ սպասելով իրենց պահին:

Ամեն ինչ պատվում է Նահապետի մահվան շուրջ: Բայց մինչեւ մահը՝ նրա առաջ իրենց հոգեվարքն են ապրում շրջապատի դեմքերը: Ամենուր «մահացու ցնծալից հրաձգություն է»: Խտրի պես ինձում են բռնորդի՝ դավաճան գնդերին, դավաճան գեներալներին: Նահապետի բնագոյն արթուն է, շատ արագ կռահում է՝ վտանգը որտեղից է գալիս, եւ հասցնում է չեղարացնել, հակառակ դեպքում այդքան երկար չէր դիմանա:

Իրադարձությունների հանգույցում կա նաեւ որոշակի մեկ այլ տեղ, որ Արմաս Իրապարակն է՝ մշտական ցուցերի երթ ու դարձով: Պալատը իշխանությունն է, հրապարակը՝ մեկ ժողովուրդը, մեկ իշխանությունների ցուցանքը՝ երթեր ու շքերթեր:

Ամեն ինչ Նահապետի աչքի առաջ է, ամեն ինչի հախից մա գալիս է, անկողն է միայն ծերության հետ խորացած հիվանդությունների՝ հատկապես միզապահուսնության դեմ:

Հիվանդություններով հանդերձ, ասում են, որ նա «շարունակում էր աճել մինչեւ հարյուր տարեկան դառնալը եւ հարյուր հիսունում երրորդ անգամ էր ստացած հա՛նք»: Քանի որ տարիքը ոչ ոք ստույգ չգիտեր, չափազանցություններն անպակաս էին: Նրա շուրջ մշտական զրույցներ էին, ըստ դրանցից մեկի՝ «ճիշտ էր պատվող այն լեզունը, թե՛ թիկունքից արձակված դավաճան գնդակն անցնում է նրա միջով առանց




վնաս հասցնելու, իսկ դիմացից ստացված, նրա մարմնին դեմ առնելով, եւ եթե չուժեն մահախաղածակ կրակողին դիպչում» (էջ 49):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Միտր բարեխոսը



Սուրբ հռչակվել է իբրեւ ամհաղ ռազմիկ՝ բարբարոսների դեմ մղած ճակատամարտերում, ինչպես նաեւ գթափրտ քրիստոնյա՝ իր ունեցվածքից սիրահար՝ աղքատներին բաշխող:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի ունեցվածքից սիրահար՝ աղքատներին բաշխող:

ՄԱՅ 13 Առաքելական եկեղեցու տոնացույցում Ս. Սարգսի տոնն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Պատճառը մեկն է. այն խորհրդանշում է սերը՝ համամարդկային արժեքներից ամենազեղեցիկն ու վեղը: Սուրբ Սարգիսը համաքրիստոնեական մեծագույն սրբերից է: Նրա անվան հետ են կապված բազմաթիվ սրբատեղիներ:

Սուրբ Սարգիս գործարար իր որդու՝ Մարտիրոսի եւ տասնչորս քաջ մարտիկների հետ մահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի: Արիության համար Սարգսին Մենն Կոստանդնուպոլս կայսր (285–337 թթ.) կարգում է իշխան եւ սպարապետ Հայաստանի սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ

միայն գերազանց սպարապետ էր, այլեւ հիւանդի բարոհիչ: Օգտվելով կայսեր հոծաբարձից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում բանդում է մեխանիզմներ, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեություն: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360–363 թթ.) սկսվում են եկեղեցու հալածանքները, Սարգիսը, աստվածային հայտնությանը հրաման առնելով՝ հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, որտեղ թագավորում էր Տիրան արքան՝ Մենն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը գերեզմանից հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Հապոնիի մոտ: Հապոնիի սիրով ընդունում է նրան եւ նշանակում զորագնդերի հրամանատար: Չորակամներից շատերը, տեսնելով զորավարի բարեպաշտությունն ու վարքը, նվիրումն առնալով, նրա աղոթքներով Տիրոջ գործած հրաշքերը, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա:

Ծառայության անցնելով Պարսկաստանում՝ Հապոնիի գործերի մեջ, Սարգիսը բազում քաջագործություններ է կատարել եւ շատերին է քրիստոնյա դարձրել: Այստեղ էլ մոգերի եւ այլոց կողմից է նա մեղադրվել պարսկական բանակում քրիստոնեություն տարածելու համար, եւ Հապոնից նրան բանտարկել է: Այդ ժամանակ է սպանվել Սարգիսի որդին՝ Մարտիրոսը: Հապոնից պահման է Սարգսից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Չորակամի անմիջապես մերժել է՝ ասելով. «Երբեք պաշտել եմ մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, որ ստեղծել է

երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի ընե աստվածներ չեն, հորդեմ մարդը դրանք կարող է փչացնել»: Այսպիսով՝ նա անսասան է մնացել իր հավատքի մեջ, որի համար էլ գլխատվել է: Պարսից զորականներից տասնչորսը, որոնք քրիստոնեություն էին ընդունել, սրբի մարմինը փաթաթել են, որպեսզի թաղեն, սակայն Հապոնիի հրամանով սպանել են նաեւ այդ զորականներին: Հավատավոր ժողովուրդը վերցրել է նահատակների եւ սրբի մարմինները եւ ամփոփել Համիան քաղաքում: Այստեղից էլ հետագայում Մեսրոպ Մաշտոցը սրբի մատուցները բերել եւ ամփոփել է Կարբի գավառի Ուշի գյուղում: Նա այդ վայրում՝ աստվածների հիմքի վրա, եկեղեցի է կառուցել, որը շատ սիրելի ուխտատեղի է դարձել հավատավոր ժողովրդի համար: Ուխտի օրը յուրաքանչյուր ուշեցու տանը մեծ խնջույք է կազմակերպվում: Նրանց այդ օրը հյուրընկալվում են դրսում ապրող իրենց հարազատներն ու բարեկամները: Համախ ուխտավորներն այնքան շատ են լինում, որ դժվար է լինում բարձրանալ վանք տանող ճանապարհով:

Սուրբ Սարգիսի տոնը մշվում է Չատկից վարսուկներեց օր առաջ՝ շաբաթ օրը: Այդ օրը եկեղեցիներում Պատարագ է մատուցվում: Սուրբ Սարգիսի տոնին մախորդում է սուրբ Գրիգոր Լուսավորչի հաստատած Առաջավորաց պահքը: Պահքը տևում է հինգ օր: Սուրբ Սարգիսի տոնը շարժական է եւ այս տարի մշվեց փետրվարի 16-ին: Եվրոպայում սուրբ Սարգիսի հիշատակի օր տոնվել է իբրեւ կեսարացի սրբի տոն՝ փետրվարի 24-ին, հուլյան տոնը եւս հունվարի 20-ին: Հայերը մախկնում այս տոնը մշել են հունվարի 31-ին:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆԵՂԻՆ

«Ամտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

Սկիզբը՝ 2018-ի թիվ 23–24, 2019-ի թիվ 1

ՄԻ վանական պատմում էր, որ մի անգամ, երբ սեղանը նստեցին ճաշելու, բոլորի դեմ աման էր դրված՝ բացի իրենից. մոռացել էին իր դեմ դնել ճաշով իր ամանը: Առաջին մտածումն այն էր, որ գոչի. «Այս ինչ է կատարվում, են չեն ուտելու, են իրավունք չունեն ուտելու: Ես իմ ուտելիքն եմ ուզում, բերե՛ք ուտելիքս»: Բայց հետո մտածեց. «Չէ, ոչինչ չեմ ասի: Տեր, սա մի առիթ է, որ հասկանամ, որ դա էլ մկեր է ինձ, այսքան ժամանակ, որ ուտում էի, մկեր էր, եւ հիմա եմ գիտակցում: Դու եւս ինձ տալիս ուտելիքը, իմ եղբայրներն են տալիս, չեն կարող պահանջել: Կաղոթեմ. «Քրիստոս Աստված, օրհնի՛ր Քո ծառաների ուտելիքն ու ըմպելիքը», ու լուռ կնստեմ»: Եվ այդպես՝ մինչ բոլորն ուտում էին, ինքը նստել, ապաւն էր եւ ջուր խմում, ապա վեր կացան, շնորհակալական աղոթք ասացին ու հեռացան սեղանից:

Այս վանականը հասկացավ, որ կյանքում ամեն ինչ մկեր է, ոչ մի բան պահանջելու իրավունք չունենք, եւ խոնարհեցրեց իր անձը: Երբ խոնարհեցնում են անձը, չես պահանջում եւ երբ չես պահանջում, միթե բեզ չի տա Նա, ով եկավ աշխարհ բեզ համար: Կգա բեզ մոտ, եւ կկշտանա հոգիդ, գուցե եւ՝ մարմինդ՝ առանց շատ ուտելիքի, բայց շատ շնորհով, սիրով ու ճշմարտությամբ:

Կարծում եմ՝ մի քիչ մխիթարվեցիք, մեր միջոց համեցինք ցավը եւ խաղաղվեցինք: Մի անգամ մի երեխա ասաց ինձ. «Տառիկս, հայր, երբ լսում է Ձեզ, սկսում է լաց լինել»: Ասացի նրան. «Ինչո՞ւ է լաց լինում, լաց լինելու բաներ են ասում»: «Պարզապես... ասաց, – լսում է, մտածում, ներքին որոշ պատմություններ ունենում ու սկսում լաց լինել»: Ահա հիմա էլ, կարծում եմ, խոնարհեցրեց մեր ցավի, մեղսության մասին ու խաղաղվեցինք մի քիչ: Այժմ եկե՛ք միասնաբե՛ր եւ հակադիր կազմակերպե՛ք, սիրո հակագրոհ՝ ասելով. «Այսօր Սուրբ Ծնունդ է՝ այնքան

զեղեցիկ մի օր, եւ դուք զվարճանում եք, ուրախանում, կեցցե՛ք, շարունակե՛ք վայելել, մենք ձեզ չենք մախանձում, չենք ատում: Մենք էլ, սակայն, պետք է որոշ տեղեր այցելե՛ք: Ինչպե՛ս. մեր աղոթքով, սիրով»: Երբ սիրում են ուրիշներին եւ աղոթում նրանց համար, թեկուզ եւ թաքնված լինեն որեւէ քարայրում, օղը լցվում է սիրո, բարության, աստվածային գթաբարության այլիքներով: Սա մի բան է, որ ժամապարհորդում է եւ կարող է հասնել ամենուր: Չգիտեմ՝ հիմա դու որտեղ ես գտնվում, որ լսում են այս հաղորդումը, բայց ուր էլ որ լինես՝ Աթենքում, Կալամատայում թե Ռոդոսում, Բրյուսելում թե Լոնդոնում, Ֆրանսիայում թե Ամերիկայում, մտածի՛ր. Թե՛ այս ռադիոալիքը կարող է այդքան հեռու հասնել մարդկային տեխնիկական միջոցներով, որքան հեռու, ուրեմն, կարող է հասնել աղոթքը: Կարող են հիմա աղոթել եւ սիրո մի այլիք ուղարկել դեպի Ամերիկա, Գերմանիա, Ավստրալիա, Հյուսիսային բեւեռ, ուր որ կուգես:

Ուրեմն բոլոր նրանք, ովքեր մենակ են հիմա, թող հավաքվեն եւ մեծ ալիքներ ուղարկեն աշխարհի բոլոր կողմերը, միացնեն իրենց ուժերը, աղոթեն ու այցելություններ անեն: Այցելե՛ք երկիր մոլորակի վրա գտնվող բոլոր մենակ մարդկանց: Մտածի՛ր հապա, դու գո՞նե «Պրիեստի եկեղեցի» ունես, որ ընկերանում է բեզ մի քիչ, կամ մարդիկ, որ բացարձակապես ոչ մի ընկեր չունեն հիմա, հերթով հետնապագույցի այլիքներն են փոխում, երգել լսում, լուրեր նայում, փորձում մի բանով լցնել իրենց մեղակությունը... Բայց չէ՞ որ դա մխիթարությունն է, չի դիպչում հոգուն: Կամ մարդիկ, որ հասնում են խելագարության աստիճանի՝ մենակության պատճառով, դղեր են ընդունում՝ հանդարտվելու համար: Իսկ դուք, ի վերջո, Քրիստոսին ունեք, հավատ ունեք, որ ամենակարեւորն է: Դու մենակ ես, բայց հավատում ես Աստծուն: Որովհետեւ ես խելագարվի: Քիչ բան չէ ունենալ Քրիստոսին, որ

բեզ շարունակ ուժ է տալիս: Հրաշալի բան է լինել մենակ Քրիստոսի հետ:

Այսպես՝ նախ այցելե՛ք ծերանոցներ, մտե՛ք ծերերի սենյակները: Դու էլ, որ այժմ ծերանոցում մենակ նստած՝ երեխաներից մկարներն են նայում, տխրում ու լաց լինում, կարող ես հարեան սենյակներն այցելել, ուրիշ հարկեր գնա՛լ ուրիշ մարդկանց մոտ, եւ այլեւս մենակ չես լինի, կտեսնես, որ միայն դու չես, շատ ու շատ այլ մարդիկ կան, որ վիշտ ու ցավ ունեն:

Ծերանոցներից դուրս գալով՝ մտովի գնացե՛ք հրապարակները, մետրոյի կայարանները, նրբանոցները, կեղտոտ սենյակները, ուր այս պահին թմրամոլներն են գտնվում: Գնացե՛ք եւ ողջույն տվե՛ք նրանց ձեր աղոթքով, աղոթե՛ք նրանց համար: Տեսե՛ք, թե ինչպես են տանջվում այդ մարդիկ, ինչպիսի ցավ են ապրում, ինչքան դժբախտ են՝ կախված լինելով այնպիսի նյութերից, որ քայքայում են հոգին ու մարմինը: Մի քիչ սեր տվե՛ք այն երեխաներին, որոնք այսօր չեն կարող լինել իրենց ընտանիքների հետ, որովհետեւ ընտանիքները նույնիսկ չգիտեն էլ, թե որտեղ են իրենց երեխաները. ամհետանում են հանկարծանքի եւ չեն կարողանում գտնել նրանց: Այս մարդիկ չեն էլ կարող երջանիկ լինել, որովհետեւ գտնվում են իրենց կեղծ ու սուտ, խաբեության ու կործանման աշխարհում, սպիտակ մահվան աշխարհում: Այս մարդիկ էլ են մենակ, բայց չեն կարող աղոթել: Դու գո՞նե կարող ես ասել. «Տէր, ողորմե՛ա»:

Ծանոթներիցս մեկը, որի տղան տառապում է թմրամոլությամբ, մի անգամ ինձ պատմեց, թե ինչպես է մտել տղայի սենյակը եւ տեսել տղային անշարժացած՝ տարօրինակ վիճակում: Այն պահին, երբ քաղցիկ է եղել կշկաթերեղը, թմրամոլութի զոհան ազդեցություն է գործել, եւ քարացել է՝ հայացքը դատարկ, ձեռքերը օդում, կշկաթերեղը ձեռքերից կախված: Սկսել է խոսել երեխայի հետ, բայց երեխան ոչինչ չի հասկացել:




Գնացե՛ք, ուրեմն, այդ տղայի մոտ, գրկե՛ք նրան ձեր աղոթքով: Աղոթե՛ք այդ վիճակում գտնվող բոլոր մարդկանց համար՝ ասելով. «Տեր Հիսուս Քրիստոս, ողորմի՛ր Քո տառապալ ծառաներին, որոնք թմրամոլութ են օգտագործում: Այսօր Սուրբ Ծնունդ է, ծնվել են Դու՝ մեծ ուրախություն ու մխիթարություն բերելով աշխարհին, եւ սակայն այդ մարդիկ չեն կարող մխիթարվել Քեզմով, քանի որ նույնիսկ այսօր թմրամոլութի ազդեցության տակ են»:

Աղոթի՛ր նաեւ նրանց համար, ովքեր մեքենա են վարում հիմա: Միլիոնավոր մեքենաներ կան այժմ փողոցներում: Ոմանք գնում են ուրախամալու, ոմանք՝ գործերով: Աղոթե՛ք, որ նրանք, ովքեր հիմա խնջույցի են գնում, հարբած չվերադառնան: Աղոթե՛ք, որ այսօր փողոցներում ոչ մի մարդ չսպանվի, որ վարորդները լինեն քթափ վիճակում:

Աղոթե՛ք, որ մարդիկ տուն վերադառնան այնքան հոգով, որքանով դուրս էին եկել տնից. հիմքով էլն դուրս եկել, հիմքով էլ թող վերադառնան, այլ ոչ թե մի մասը չսպանվե՛ր աղաղաճա, մյուս մասն էլ հիվանդանոց ընկնի կամ հեռանա այս աշխարհից:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 7

Հայր Պաիսիոսը մենակ, բայց անմեղի ոչ միայնակ մարդ, աշխարհը լցրել էր հրեշտակներով, Աստուծո շնորհով էր լցրել: Ասում են, որ թիթեղյա ամանների մեջ մոմեր էր վառում եւ ասում. «Տէր, սա հիվանդների համար է, սա՝ թորածողների, սա՝ այսինչ մարդու առողջության...»: Եւ այդպես աղոթում էր բոլորի համար: Հազվադեպ էր դուրս գալիս իր խցից, բայց իր աղոթքով

ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾԵՆԴԻՆ

ճանապարհորդում էր ողջ աշխարհում՝ սեր սփռելով ամենուր: Դու էլ հեռացիր աշխարհի ձգողականությունից՝ այդ ծանծաղու ուժից, եւ մտիր Աստծու սիրո մեջ, գրկիր աշխարհը եւ աղոթիր բոլորի համար:

Քայլերն նորից փողոցներում եւ այգեներն հիվանդանոցները, մտներն ծանր հիվանդների սենյակները, այն սենյակները, որոնց դռների վրա գրված է. «Մուտքը արգելված է», այն սենյակները, որոնցում ծանր վիրահատություններ են տեղի ունենում՝ 8–15 ժամ տևողությամբ, եւ պարզ չէ՝ հիվանդը կապիր թե ոչ: Այցեներն այս ամբողջական սիրով, աղոթքներն անմեղ համար:

Եվ դու, որ պառակած ես անկողնում ու մենակ ես, կարող ես այցելել նաեւ այլ երկրներ. այն երկրները, որոնցում ամենուր դեռ պատերազմի ծխի հոտն է գալիս՝ Լիբանան, Իրաք, Իրան, Սերբիա եւ այլն, որոնցում պատերազմից մնացած վերքերը դեռ չեն լավացել: Պատերազմն, այր, ավարտվել է, բայց միթե որբությունը վերացել է. թեկուզ եւ անցել է 5 կամ 10 ամիս, թեկուզ եւ անցել

է 5 կամ 10 տարի: Աղետներն այդպես հեշտ չեն անցնում: 2–3 օր լուրերը դրա մասին են խոսում, հետո մոռանում են, սակայն ցավն ու տառապանքը մնում են, մնում է որբ երեխաների լացը:

Եթե հոգմեցիր, դադար տուր, եթե վշտացար, մերիկ ինձ եւ անցատիր ռադիոն: Չեմ ստիպում, որ լսես, չեմ ուզում տխրեցնել քեզ, պարզապես ուզում եմ ասել, որ դու էլ ուժ ունես քո մեջ՝ ահեղի մի ուժ: Այլ կերպ ասած՝ քո մեծականությամբ, մի ընկճվիր, սովորիր սիրել: Այս տարի մի քայլ առաջ գնա դեպի սիրո աշխարհ, մտիր այդ աշխարհը: Քեզ չեմ սիրում. դու սիրիր: Քեզ հետ չեմ խոսում. դու խոսիր: Չեմ աղոթում քեզ համար. դու աղոթիր ուրիշների համար: Ինչո՞ւ ես ուզում վերցնել. սովորիր տալ: Սա դժվար ճանապարհ է մեզ համար, քանի որ խախտվում է մեր եռասիրությունը, բայց այդպես արա եւ կտեսնես, թե ինչքան լավ կզգաս քեզ:

Ասում ես՝ դիմանում ես: Դե, ուրեմն, մի այցելությունը էլ անենք բաժանված ամսախմբերին, նրանց էլ բաղձրություն ու քնքշանք

տանք մեր աղոթքով: Հապա պատկերացրու. կամ մարդիկ, որ այսօր առաջին անգամ են Սուրբ Ծնունդը մենակ նշում՝ առանց իրենց կնոջ կամ ամուսնու, առանց իրենց երեխաների, որովհետեւ երեխաներն ամուսնու կամ կնոջ մոտ են, տատիկի մոտ են: Մասնատվել է ընտանիքը: Անցյալ տարի այս ժամանակ միասին էին: Ի՞նչ են զգում հիմա այդ մարդիկ: Աղոթք չեն տանջվում, չեն զգում դառնություն իրենց հոգում. ինչ-չին այդ վիճակին հասան: Եվ ի՞նչ են զգում երեխաները, որ հայրիկն ու մայրիկն այս տարի միասին չեն, որ առանձին-առանձին են տալու իրենց նվերները, որ այսօր պիտի արագ ճաշեն, որովհետեւ ճաշից հետո հայրիկի հետ պիտի քաղաք իջնեն՝ զբոսնելու, տեսնելու Ձմեռ պապիկին, մեծ տոնածառը, եւ երեկոյան նորից վերադառնան մայրիկի մոտ: Անցյալ տարի բոլոր միասին էին զբոսնում քաղաքում, միասին էին ուտում, միասին այցելություններ անում, եւ տունն ամուշ բոլոր ուներ, իսկ հիմա տխրության հոտ է արձակում:

Շարունակելի

Թարգմանությունը հունարենից՝ Տաթևիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Միրո բարեխոսը

Սկիզբը՝ էջ 7

Սուրբ Սարգսի անունով կառուցվել են բազմաթիվ սրբավայրեր, մենաստաններ, գյուղեր, բերդեր, եկեղեցիներ, այդ թվում՝ երեսներ քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցին: Թախիմի Մաստարա գյուղի մոտ՝ ձորի մեջ, կա մի քար, որն անվանակոչել են «սուրբ Սարգսի քար»: Ասում են՝ Սարգսի ձիւ ուղը խփել է այդ քարին, որից էլ քարն ստացել է նրա անունը:

Սուրբ Սարգսի տոնը նշվում է ոչ միայն ծեսով, աղոթքներով ու Պատարագով, այլ նաեւ ժողովրդական գեղեցիկ, հային բնորոշ յուրահատուկ ավանդույթներով: Տոնի խորհրդանշական ուսեստը փոխիմեն է, որի գործածությունը տոնին նախորդող հինգ օրերին արգելվում է: Ուրբաթ երեկոյան տանտիրուհիները՝ հատկապես տաճերները, վերցնում էին սկուտեղները, վրան փոխին մաղում, մոմ կամ կանթեղ վառում ու դնում դռան ետեղ կամ կտորին՝ հուսալով, որ սուրբ Սարգիսը կգեղեցիկ, կային բնորոշ յուրահատուկ ավանդույթներով: Տոնի խորհրդանշական ուսեստը փոխիմեն է, որի գործածությունը տոնին նախորդող հինգ օրերին արգելվում է: Ուրբաթ երեկոյան տանտիրուհիները՝ հատկապես տաճերները, վերցնում էին սկուտեղները, վրան փոխին մաղում, մոմ կամ կանթեղ վառում ու դնում դռան ետեղ կամ կտորին՝ հուսալով, որ սուրբ Սարգիսը կգեղեցիկ, կային բնորոշ յուրահատուկ ավանդույթներով:

Մի գեղեցիկ ավանդապատումն էս: Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սամանին: Վերջինս ես սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրն արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնուխան տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար գնալ օտարություն՝ աշխատելու: Սակայն ինչնէլ այդ Աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ: Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում Աշուղ

Ղարիբի համար: Նա գրկված էր իր գեղեցկուհուն տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չուներ նրա մասին, սակայն չէր հուսահատվում, կարոտով սպասում էր այն օրվան, երբ նրանք կհանդիպեին, ընտանիք կկազմեն եւ ամբողջ կյանքը կապեն միասին: Յոթ տարի շարունակ գիշերուցօր աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց եւ տունդարձի ճամփա ընկավ: Ծանապարհը լի էր փորձություններով եւ խոչընդոտներով: Թվում էր, թե Աշուղ Ղարիբն իր հոյսը պետք է կորցնի, չի հասնի իր սիրած էակին: Այդ ամենից դողած՝ նա ագնիվ սրտով եւ արդար մտքով աղոթում է սուրբ Սարգսին՝ հայցելով արագագիտա սրբի օգնությունը: Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իր արագահաս ճերմակ մոխրագույն խկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավալին եւ մեկ ակնթարթում հասցնում Շահ-Սամանի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն ու նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Սուրբ Սարգսին աղոթք էր ինչեցնում նաեւ այն սիրահար գույգերը, որոնք, իրենց ծնողների կամքին հակառակ, միասին փախել էին տնից: Նրանց գիշերուցօր աղոթում էին, որ բարեգութ սուրբը մեղմացնի, հանդարտեցնի իրենց գայլաբան ծնողների սրտերը՝ իրենց ներելու ակնկալիքով: Սրբին աղոթում է նրա օգնություն էին ակնկալում նաեւ հոյ կամայք:

Սուրբ Սարգսին բնորոշում են մի քանի անվանումներով՝ «բարեխոս», «առեմահաս», «շնորհատու», «արագահաս» եւ այլն, որոնք խորհրդանշում են սրբի՝ ժամանակին օգնության հասնելը, փրկելը: Իսկ պարսիկները նրան կոչել են «ամհաթ» վկա արարից եւ կատարող բոլոր խնդրվածքների:

Սուրբ Սարգսի գլխավոր եւ ամենատա-

րածված ժողովրդական արարողությունը, որը ոչ մի կապ չունի եկեղեցու ավանդության հետ, աղի բլիթի պատրաստումն ու օգտագործումն է, որը, ի դեպ, շատ տարածված է նաեւ մեր օրերում: Ուրբաթ երեկոյան երիտասարդներն աղի բլիթ են ճաշակում՝ գիշերը իրենց ապագա սիրեցյալին տեսնելու հույսով: Յուրաքանչյուրը հավատում է, որ այդ գիշեր երազում իրեն ջուր տվող իր կյանքի ընկերն է լինելու: Եթե բաժանվել լիքը լինի, ապա շատ երկար են միասին ապրելու, եթե կիսատ կյանքի կեսը, իսկ եթե թի՛ք՝ ընդամենը մի քանի տարի կամ ավելի կարծ:

Նախկինում Սուրբ Սարգսի տոնին երեխաներին նվերներ էին տալիս: Մասնավորապես՝ երոկից կախված գուլպաների մեջ տատիկները սովորաբար դնում էին տոնի ծիսական կերակուրներից եւ մի քանի մամուրադ: Այս սովորույթն Ուշիում մինչ օրս պահպանվել է՝ մի փոքր փոփոխված: Այդ օրը ծնողները երեխաների համար նվերներ են գնում:

Դ՛ն վաղ անցյալում Սուրբ Սարգսի տոնին շատ էին հարսանիքները: Իսկ ապագա հարսի տեղը մատնանշելու համար մենք իր յուրօրինակ եղանակ էին ընտրել: Աթարի ամրոց էին պատրաստում եւ ցախավել դնում գազաթին, որը նշանակում էր, որ այդ տանը չամուսնացած աղջիկ կա: Տուկերի տակ քաղցր կոնֆետներ էին դնում՝ որպես շնորհակալություն սրբին՝ երջանկության եւ բախտավորության համար:

Պատկերացրության մեջ սուրբ Սարգիսը



պատկերվում է ձիու վրա նստած՝ վիշապին խոցելու: Հիմնականում սուրբը պատկերվում է որդու՝ Մարտիրոսի հետ միասին: Տարեգրությունում նրա ծննդյան մասին տույգ տեղեկություններ չկան, մահվան թվականը նշվում է 362-ը կամ 363-ը, մահվան վայրը նշվում է Պարսկաստանի Դաղման քաղաքը:

Վերոնշյալ ավանդույթների մեծ մասը, բնականաբար, եկեղեցում չեն կիրառվում, սակայն ժողովրդի կողմից դարձրել պատմվել ու հասել են մեր օրերը՝ մեկ անգամ եւս վկայելով սրբի խիստ սիրված լինելու մասին:

ԱՆՈՒՆ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ krishaya@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Սուրբ. տպագր. 28.02.2019 թ.

Տպաքանակ՝ 1175

Նոր հրատարակություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել Մայր Աթոռի միաբան Մեսրոպ արք. Տեր-Սովակիսյանի «Պատմություն Սուրբ Գրոց հայկական թարգմանության» աշխատությունը: Այն ռուսերենից թարգմանել է Սուսաննա Նահապետյանը:

Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Սովակիսյանի (1865–1939) ներկա գիրքը հայերեն Աստվածաշնչի ձեռագրական ավանդույթի առաջին լուրջ գիտական հետազոտությունն է, որ արվել է 19-րդ

դարավերջի՝ հեղինակին հայտնի նյութերի հիման վրա: Այն ժամանակի հայագիտության եւ հայ աստվածաշնչագիտության կարեւոր առաջընթաց քայլերից կամ ձեռքբերումներից է: Աշխատությունը ռուսալեզու է եւ հրատարակվել Սանկտ Պետերբուրգում 1902 թ.: Ցավոք, սույն աշխատությունը մինչև այժմ հասել էր եղել շատ հայագետներին:

Գիրքը հրատարակվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենամսությամբ:

